

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

Գլենդելի հանրային դպրոցների Ուսումնական խորհուրդը հաստատում է, որ ուսումնական ծրագրերը ղեկավարելիս կրթաշրջանն ունի նահանգային ու դաշնային օրենքներին ու կանոններին ենթարկվելու գլխավոր պատասխանատվություն: Ուսումնական խորհուրդը խրախուսում է հնարավորության դեպքում բողոքների վաղաժամկետ լուծումը: Ավելի պաշտոնական գործընթաց պահանջող բողոքների լուծման համար ուսումնական խորհուրդը պետք է բողոքների համընդհանուր համակարգ որդեգրի, որը նշված է 5 CCR 4600-4670-ում և առկա է վարչական կանոնակարգերում:

Բողոքի համընդհանուր ընթացակարգերին (UCP) ենթակա բողոքներ

Կրթաշրջանի Բողոքի համընդհանուր ընթացակարգը (UCP) պետք է օգտագործվի հետևյալ ծրագրերի և գործունեության վերաբերյալ բողոքները քննելու և լուծելու համար:

1. Հարմարեցումներ հղի կամ ծնող հանդիսացող աշակերտների համար (Կրթության օրենսգիրք 46015)
2. Չափահասների կրթության ծրագրեր (Կրթության օրենսգիրք 8500-8538, 52334.7, 52500-52617)
3. Դասերից հետո կրթության և անվտանգության ծրագրեր (Կրթության օրենսգիրք 8482-8484.65)
4. Գյուղատնտեսական կարիերայի տեխնիկական կրթություն (Կրթության օրենսգիրք 52460-52462)
5. Կարիերայի տեխնիկական ու տեխնիկական կրթության և կարիերայի տեխնիկական և տեխնիկական ուսուցման ծրագրեր (Կրթության օրենսգիրք 52300-52462)
6. Երեխայի խնամքի և զարգացման ծրագրեր (Կրթության օրենսգիրք 8200-8488)
7. Փոխհատուցումային կրթություն (Կրթության օրենսգիրք 54400)
8. Համախմբված կատեգորիկ օգնության ծրագրեր (Կրթության օրենսգիրք 33315; 34 CFR 299.10-299.12)
9. Դասընթացի ժամանակահատվածներ՝ առանց կրթական բովանդակության (կրթության օրենսգիրք 51228.1-51228.3)

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

10. Խտրականություն, ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարքներ Կրթաշրջանի ծրագրերում և գործունեության մեջ, ներառյալ այն ծրագրերում կամ գործողություններում, որոնք ուղղակիորեն ֆինանսավորվում են կամ որևէ պետական ֆինանսական օգնություն են ստանում, անձի ռասայական կամ էթնիկական պատկանելիության, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթողի կարգավիճակի, էթնիկական խմբի հետ նույնացման, տարիքի, դավանանքի, ընտանեկան դրության, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամության, առողջական վիճակի, սեռի, սեռական կողմնորոշման, գենդերի, սեռական ինքնության, սեռի արտահայտման, գենետիկ տվյալների կամ որևէ այլ բնութագրի հիման վրա, նշված Կրթության օրենսգրքի 200 կամ 220 բաժիններում, Կառավարության օրենսգրքի 11135 կամ Քրեական օրենսգրքի 422.55 մասում կամ անձի կամ խմբի՝ այս իրական կամ ենթադրյալ բնութագրերից մեկի կամ մի քանիսի հետ առնչություն ունենալու հիման վրա (5 CCR 4610)
11. Խնամատարության տակ գտնվող աշակերտների, անօթևան աշակերտների, զինվորական ընտանիքների աշակերտների, նախկինում անչափահասների դատարանի դպրոցում սովորող աշակերտների կրթության և ավարտական պահանջները (Կրթության օրենսգրքի 48645.7, 48853, 48853.5, 49069.5, 51225.1, 51225.2)
12. Աշակերտի հաջողության օրենք (Կրթության օրենսգրքի 52059; 20 USC 6301)
13. Տեղական վերահսկողության հաշվետու ծրագիր (Կրթության օրենսգրքի 52075)
14. Գաղթականների կրթություն (Կրթության օրենսգրքի 54440-54445)
15. Ֆիզկուլտուրայի դասավանդման ժամաքանակ (Կրթության օրենսգրքի 51210, 51222, 51223)
16. Աշակերտների վճարներ (Կրթության օրենսգրքի 49010-49013)
17. Խելամիտ հարմարեցումներ կրծքով կերակրող աշակերտի համար (Կրթության օրենսգրքի 222)
18. Շրջանային մասնագիտական կենտրոններ և ծրագրեր (Կրթության օրենսգրքի 52300-52334.7)

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

19. Աշակերտի հաջողության դպրոցական ծրագրեր, ինչպես պահանջվում է կատեգորիաների դաշնային և/կամ նահանգային հատուկ ֆինանսավորման համախմբված հայտի համար (Կրթության օրենսգիրք 64001)
20. Դպրոցի անվտանգության ծրագրեր (Կրթության օրենսգիրք 32280-32289)
21. Դպրոցական խորհուրդներ, ինչպես պահանջվում է դաշնային և/կամ նահանգային հատուկ կատեգորիկ ֆինանսավորման համախմբված հայտի համար (Կրթության օրենսգիրք 65000)
22. Պետական նախադպրոցական ծրագրեր (Կրթության օրենսգիրք 8207-8225)
23. Պետական նախադպրոցական հաստատություններում առողջության և անվտանգության խնդիրներ արտոնագրումից ազատված ծրագրերում (Կրթության օրենսգիրք 8212)
24. Ցանկացած բողոք, որը ենթադրում է վրեժխնդրություն բողոքողի, բողոքի գործընթացի մեկ այլ մասնակցի կամ որևէ մեկի հանդեպ, ով գործել է այս քաղաքականությանը ենթակա խախտման բացահայտման կամ դրա մասին հայտնելու դրդմամբ:
25. Հանրային կրթության ցանկացած այլ նահանգային կամ դաշնային ուսումնական ծրագիր, որը Հանրային կրթության Գերատեսուչը կամ նրա պաշտոնակատարը պատշաճ է համարում:

Ուսումնական խորհուրդն ընդունում է, որ կախված խնդրի բնույթից, կարելի է առաջարկել խնդրի այլընտրանքային լուծում (ADR), որն ընդունելի կլինի բոլոր կողմերի համար: ADR, ինչպես օրինակ՝ միջնորդություն, կարելի է առաջարկել այն բողոքների դեպքում, որոնցում ներգրավված են մեկից ավելի աշակերտներ և ոչ մի չափահաս: Միջամտություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության պարագայում կամ այն դեպքում, երբ ողջամիտ վտանգ կա, որ մի կողմն իրեն ստիպված կգգա՝ միջամտությանը մասնակցելու: Գերատեսուչը կամ նրա պաշտոնակատարը պետք է վստահանա, որ արդյունքները համահունչ են նահանգային և դաշնային օրենքներին և կանոններին:

Կրթաշրջանը պետք է բոլոր բողոքողներին պաշտպանի վրեժխնդրությունից: Բողոքի հետաքննության ժամանակ, ըստ օրենքի, ներգրավված կողմերի գաղտնիությունը պետք է պաշտպանված լինի: Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ասիաբեկում կամ բռնացում) դեմ ներկայացրած որևէ բողոքի դեպքում, գերատեսուչը կամ պաշտոնակատար անձը պետք է գաղտնի պահի

### Համայնքային հարաբերություններ

#### Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

բողոքարկուի ինքնությունը և/կամ բողոքի առարկան, երբ հարկն է, եթե նա ինքը բողոքարկում չէ, և քանի դեռ պահպանվում է բողոքարկման գործընթացի ամբողջականությունը:

Երբ UCP-ին չվերաբերող մեղադրանք է ներառված UCP բողոքում, կրթաշրջանը պետք է ոչ-UCP (UCP-ին չվերաբերող) բողոքն ուղարկի համապատասխան անձնակազմին կամ գործակալությանը, որը պետք է քննի ու հնարավորության դեպքում UCP-ի հետ կապված մեղադրանք(ներ)ը լուծի կրթաշրջանի UCP-ի միջոցով:

Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է կրթաշրջանի աշխատակազմի անդամներին տրամադրի վերապատրաստում, որը նրանց կզինի գիտելիքներով և իրազեկ կդարձնի UCP-ին առնչվող գործող օրենքին և պահանջներին, ներառյալ ձեռնարկելի քայլերը և ժամկետները, որ նշված են այս կանոնադրության և հարակից վարչական կանոնակարգերի մեջ:

Գերատեսուչը կամ պաշտոնակատարը պետք է պահպանեն յուրաքանչյուր բողոքի և հետագա հարակից գործողությունների արձանագրությունները, ներառյալ հետաքննության ընթացքում ձեռնարկված քայլերը և անհրաժեշտ բոլոր տեղեկությունները, 5 CCR 4631 և 4633 օրենքի պահանջներին համապատասխան:

#### Ոչ-UCP Բողոքներ

Հետևյալ բողոքները ենթակա չեն Կրթաշրջանի UCP-ին, պետք է հետաքննվեն և լուծվեն նշված գործակալության կողմից կամ այլընտրանքային գործընթացի միջոցով.

1. Երեխայի չարաշահման կամ անտեսման մեղադրանքով ցանկացած բողոք պետք է հղել Վարչաշրջանի Սոցիալական ծառայությունների բաժանմունք (DPSS), Պաշտպանական ծառայությունների բաժանմունք կամ համապատասխան իրավապահ գործակալություն: (5 CCR 4611)
2. Երեխաների զարգացման ծրագրի կողմից առողջության և անվտանգության վերաբերյալ խախտումների մասին ցանկացած բողոք, արտոնագրված հաստատությունների համար, պետք է հանձնել Սոցիալական ծառայությունների վարչությանը: (5 CCR 4611)
3. Ցանկացած բողոք, որը պնդում է, որ աշակերտը, կրթական ծրագրում կամ գործունեության ընթացքում, որտեղ Կրթաշրջանը զգալի վերահսկողություն է իրականացնում համատեքստի և պատասխանողի նկատմամբ, ենթարկվել է սեռական ոտնձգությունների, ինչպես սահմանված է 34 CFR 3 Policy Reference

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

Disclaimer-ում. 106.30, պետք է լուծվի դաշնային Title IX-ի բողոքարկման ընթացակարգերի միջոցով, որոնք ընդունվել են 34 CFR 106.44-106.45-ի համաձայն, ինչպես նշված է AR 5145.71-ում - Title IX՝ Մեռական ոսնձգությունների բողոքի ընթացակարգեր:

4. Աշխատանքային խտրականության կամ հետապնդման մեղադրանքով ցանկացած բողոք պետք է ուսումնասիրվի և լուծվի Կրթաշրջանի կողմից՝ համաձայն AR4030 օրենքում նշված Աշխատատեղում ոչ խտրական վերաբերմունքի մասին սահմանված ընթացակարգերի, ներառյալ՝ Կալիֆոռնիայի Արդարացի զբաղվածության և բնակարանային ապահովման վարչություն բողոք ներկայացնելու իրավունքը:
5. Ցանկացած բողոք, որը ենթադրում է հատուկ կրթության վերաբերյալ նահանգային կամ դաշնային օրենքի կամ կանոնակարգերի խախտում, անվճար համապատասխան հանրային կրթության (FAPE) տրամադրման հետ կապված համաձայնագրի խախտում, պետք է ներկայացվի Կալիֆոռնիայի կրթության վարչություն (CDE), համաձայն AR 6159.1 - Հատուկ կրթության ընթացակարգային երաշխիքներ և բողոքներ օրենքի Ցանկացած բողոք, որը վերաբերում է հատուկ կրթությանն առնչվող նահանգային կամ դաշնային օրենքի կամ կանոնակարգի խախտմանը, կարգավորման համաձայնագրին՝ կապված անվճար համապատասխան հանրային կրթության (FAPE) տրամադրման հետ, պատշաճ ընթացակարգային լուծման կարգը չկատարելուն կամ մերժելուն, որի սուբյեկտն է Կրթաշրջանը կամ ֆիզիկական անվտանգության մտահոգությունը, որը խանգարում է Կրթաշրջանի կողմից FAPE-ի տրամադրմանը, պետք է ներկայացվի Կալիֆոռնիայի կրթության վարչություն (CDE)՝ համաձայն AR 6159.1-ի. Հատուկ կրթության ընթացակարգային երաշխիքներ և բողոքներ: (5 CCR 3200-3205)
6. Ցանկացած բողոք Կրթաշրջանի սննդառության ծրագրի՝ կերակուրի հաշվարկի և պահանջի, փոխհատուցվող կերակուրների, երեխաների կամ չափահասների իրավասության կամ ճաշարանի դրամական միջոցների օգտագործման և թույլատրելի ծախսերի՝ օրենքի հետ անհամապատասխանության մասին, պետք է ներկայացվի կամ ուղարկվի CDE՝ համաձայն BP 3555 – Սննդառության ծրագրին համապատասխան: (5 CCR 15580-15584)
7. Կրթաշրջանի սննդի ծառայության ծրագրի՝ ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, սեռի, տարիքի կամ հաշմանդամության պատճառով խտրականության ցանկացած մեղադրանք պետք է ներկայացվի կամ ուղարկվի ԱՄՆ-ի Գյուղատնտեսական նախարարություն՝ համաձայն BP 3555 - Սննդառության ծրագրին համապատասխան: (5 CCR 15582)

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր (UCP)

8. Դասագրքերի կամ ուսումնական նյութերի անբավարարությանը, հաստատությունների արտակարգ կամ հրատապ պայմանների հետ կապված ցանկացած բողոք, որը սպառնում է աշակերտների կամ աշխատակազմի առողջությանը կամ անվտանգությանը, ուսուցիչների թափուր աշխատատեղերն ու սխալ նշանակումները, պետք է ուսումնասիրվեն և լուծվեն AR 1312.4 – Վիլյամի Բողոքի համընդհանուր ընթացակարգերի հիման վրա (Կրթության օրենսգիրք 35186)

Իրավական հղումներ. Կրթության օրենսգիրք, բաժիններ՝ 200-262.4, 8200-8498, 8500-8538, 18100-18203, 32221.5, 32280-32289, 35186, 46015, 48853-48853.5, 48985, 49010-49014, 49060-49079, 49069.5, 49490-49590, 49701, 51210, 51222, 51223, 51225.1-51225.2, 51226-51226.1, 51228.1-51228.3, 52059.5, 52060-52077, 52075, 52300-52462, 52500-52616.24, 54000, 54445, 54460-54529, 59000-59300, 64000-64001, 65000-65001  
Կառավարական օրենսգիրք, բաժիններ. 11135, 12900-12996  
Առողջապահական և անվտանգության օրենսգիրք, բաժիններ 1596.792, 1596.7925  
Քրեական օրենսգիրք, բաժիններ 422.55, 422.6  
Կանոնակարգերի օրենսգիրք, Մաս 2, բաժին 11023  
Կանոնակարգերի օրենսգիրք, Մաս 5, բաժիններ 3200-3205, 4600-4670, 4680-4687, 4690-4694, 4900-4965, 15580-15584  
Միացյալ Նահանգների օրենսգիրք, Մաս 20, բաժիններ 1221, 1232g, 1681-1688, 6301-6576, 6801-7014  
Միացյալ Նահանգների օրենսգիրք, Մաս 29, բաժին 794  
Միացյալ Նահանգների օրենսգիրք, Մաս 42, բաժիններ 2000d-2000e-17, 2000h-2-2000h-6, 6101-6107, 11431-11435, 12101-12213  
Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, Մաս 28, բաժին 35.107  
Դաշնային կանոնակարգերի օրենսգիրք, Մաս 34, բաժին 99.1-99.67, 100.3, 104.7, 106.1-106.82, 106.8, 106.9, 110.25

Քաղաքականությունն ընդունվել է. 11/17/1992

Քաղաքականությունը բարեփոխվել է. 12/17/2002, 11/03/2010, 03/11/2014, 04/15/2014, 05/06/2014, 04/05/2016, 10/18/2016, 08/15/2017, 02/06/2018, 05/01/2018, 06/04/2019, 07/14/2020, 02/16/2021, 04/05/2022

(Նախկինում BP 1312)